ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/53

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի տնօրեն՝

Հ. Մանուչարյանի

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Ա. Պարանյանի (լիազորագիր տրված՝ 18.07.2019թ.)

«Գառու Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գ. Հարությունյանի

ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչ՝

Ա. Ասատրյանի (լիազորագիր տրված՝ 23.05.2019թ.)

Քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ճտքավոր կոշիկների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 17.07.2019թ. ներկայացված և 18.07.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/53 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 17.12.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Ճտքավոր կոշիկների» ձեռքբերման նպատակով 31.05.2019թ. հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել «Գառու գրուպ» ՍՊԸ-ն, «ԷՅ ԲՈՒԹՍ» ՍՊԸ-ն և «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում»ՓԲԸ-ն:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Գառու գրուպ» ՍՊԸ-ն:

Իսկ նույն արձանագրության 4.3 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՀ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «ֆինանսնական միջոցներ» որակավորման չափանիշի վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Իսկ արդեն www.gnumner.am համացանցային կայքում 11.07.2019թ. հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 03.07.2019թ.տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Գառու գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում ներկայացված գնային առաջարկից:

Արդյունքում՝ գնահատող հանձնաժողովը առաջնորդվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասցենել որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 03.07.2019թ. ծանուցել

մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Նույն թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Գառու գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է վերոնշյալ անհամապատասխանությունը և նիստը շարունակել է:

Նույն թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման հատկանիշները գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են համապատասխան հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարվել է ընտրված մասնակից և անգործության ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Ընկերությունը վկայակոչել է բողոքի իրավական հետևյալ հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները /անգործությունը/ և որոշումները:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պահանջի դեպքում մասնակցի հայտի, ներառյալ գնային, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Հայտնում ենք, որ սույն թվականի հուլիսի 16-ին «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման հատկանիշները հիմնավորող փաստաթղթերը

ներկայացնելու պահանջ էր ներկայացվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որի արդյունքում 17.07.2019թ. Ընթացակարգի քարտուղարի կողմից տրամադրվել է համապատասխան փաստաթղթերը:

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ակնհայտ դարձավ, որ ի պատասխան գնահատող հանձնաժողովի հարցմանը՝ 24.06.2019թ. ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությամբ «Գառու գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում ներկայացված գնային առաջարկից /կազմում է 349 181 331 ՀՀ դրամ/:

Այնուհետև գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասցենել որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 03.07.2019թ. ծանուցել մասնակցին՝ սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները՝ ֆինանսական չափանիշի որակավորման մասով՝ հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի մասով:

«Գառու գրուպ» ՍՊԸ-ն անհասկանալի և կասկածելի պայմաններում՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից նույն 03.07.2019թ. թվագրված տեղեկանք է ներկայացնում գնահատող հանձնաժողովին, որտեղ նշված է՝ տրվում է «Գառու գրուպ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00443711/ կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկների և շրջանառության հարկի հաշվարկների նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է՝ 417 567 732 ՀՀ դրամ:

Արդյունքում գնահատող հանձնաժողովը վերը նշված տեղեկանքը հիմք ընդունելով՝ որոշում է կայացրել բավարար գնահատել «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, դեռ ավելին, վերջինս ճանաչվել է հաղթող մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ:

5) աշխատանքային ռեսուրսներ:

Համաձայն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի (մինչև ՀՀ կառավարության 02.05.2019թ. ընդունված ՀՀ կառավարության թիվ 516-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ) համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ կառավարության 02.05.2019թ. ընդունված ՀՀ կառավարության թիվ 516-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը վերաշարադրվել է հետևյալ բովանդակությամբ՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Այլ կերպ ասած, Կարգի 44-րդ կետից հանվել է այն հատվածը, որ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Ընկերությունը հայտնել է, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ նույն 02.05.2019թ. ընդունված ՀՀ կառավարության թիվ 516-Ն որոշմամբ (2-րդ մաս) սահմանվել է հետևյալը՝ սույն որոշման պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսած և դեռևս չավարտված գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա:

Վերոհիշյալ նորմերի համադրումից պարզ է դառնում հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ճտքավոր կոշիկների ձեռքբերման նպատակով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով հրատապ բաց

մրցույթը հայտարարվել է 31.05.2019թ., այսինքն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով գնման գործընթացը սկսվել է 31.05.2019թ.:

ՀՀ կառավարության 02.05.2019թ. ընդունված ՀՀ կառավարության թիվ 516-Ն որոշումը ուժի մեջ է մտել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով հրատապ բաց մրցույթը սկսվելուց հետո՝ հաջորդ օրը՝ 01.06.2019թ.:

ՀՀ կառավարության թիվ 516-Ն որոշման 2-րդ մասի ուժով նշված որոշման պահանջները չեն տարածվում մինչև տվյալ որոշման ուժի մեջ մտնելը սկսած ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով հրատապ բաց մրցույթի վրա:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են մինչև ՀՀ կառավարության 02.05.2019թ. ընդունված ՀՀ կառավարության թիվ 516-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի խմբագրությամբ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 02.05.2019թ. ընդունված ՀՀ կառավարության թիվ 516-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները) 44-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 43-րդ կետով սահմանված ժամկետում ՀՀ ՊԵԿ-ի կողմից գնահատող հանձնաժողովին տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Վերոհիշյալ վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով հրատապ բաց մրցույթի կարգավորման իրավական ակտը հանդիսանում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը՝ մինչև դրանում ՀՀ կառավարության 02.05.2019թ. ընդունված ՀՀ կառավարության թիվ 516-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները:

Ուստի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր ղեկավարվել Կարգի 44-րդ կետի հետևյալ խմբագրությամբ՝ Կարգի 43-րդ կետով սահմանված ժամկետում ՀՀ ՊԵԿ-ի կողմից գնահատող հանձնաժողովին տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ

տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Այլ կերպ ասած, շտկման արդյունքում «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեղեկանքը, որը տարբերվում էր գնահատող հանձնաժողովին ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունից, չէր կարող հիմք հանդիսանալ «Գառու գրուպ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու համար, քանի որ Կարգի 44-րդ կետը իմպերատիվ սահմանում է, որ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի (մինչև ՀՀ կառավարության 02.05.2019թ. ընդունված ՀՀ կառավարության թիվ 516-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները) 44-րդ կետի պահանջների խախտում:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝

1.Պարտավորեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 03.07.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման հատկանիշները հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու և վերջինիս ընտրված մասնակից հայտարարելու մասին որոշումները:

2. Պարտավորերցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին մերժել «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ի լրումն բողոքի Ընկերությունը 25.07.2019թ. հայտնել է հետևյալը.

24.06.2019թ. ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությամբ «Գառու գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում ներկայացված գնային առաջարկից / 349 181 331 ՀՀ դրամ/:

Այնուհետև գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասցենել որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 03.07.2019թ. ծանուցել մասնակցին՝ սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել

անհամապատասխանությունները՝ ֆինանսական չափանիշի որակավորման մասով՝ հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի մասով:

«Գառու գրուպ» ՍՊԸ-ն անհասկանալի և կասկածելի պայմաններում՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից նույն 03.07.2019թ. թվագրված տեղեկանք է ներկայացնում գնահատող հանձնաժողովին, որտեղ նշված է՝ տրվում է «Գառու գրուպ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00443711/ կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկների և շրջանառության հարկի հաշվարկների նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է՝ 417 567 732 ՀՀ դրամ:

Արդյունքում գնահատող հանձնաժողովը վերը նշված տեղեկանքը հիմք ընդունելով՝ որոշում է կայացրել բավարար գնահատել «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, դեռ ավելին, վերջինս ճանաչվել է հաղթող մասնակից:

Մինչդեռ «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից 03.07.2019թ. ներկայացված տեղեկանքում անհասկանալի կերպով հաշվարկվել է նաև ԱԱՀ և որ ամենակարևորն է գնահատող հանձնաժողովի կողմից վերը նշված փաստը նույնպես անտեսվել է;

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ փաստի վրա՝ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ-ն) անուղղակի հարկ է, որը գանձվում է ապրանքների ներմուծման դեպքում, մատակարարի կողմից մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների դիմաց և վերականգնվում է գնորդի կողմից առևտրային շղթայի յուրաքանչյուր էտապում մինչև վերջնական սպառողը:

Ապրանքների մատակարարումից կամ ծառայությունների մատուցումից հաշվարկված և դրանց ձեռք բերման դիմաց մատակարարներին (ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային մարմիններին) վճարած ԱԱՀ-ի գումարների տարբերությունը փոխանցվում է պետական բյուջե սահմանված ժամկետում:

2. Սույն թվականի հուլիսի 16-ին «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման հատկանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու պահանջ էր ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որի արդյունքում 17.07.2019թ. վերջապես Ընթացակարգի քարտուղարի կողմից տրամադրվել է համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ «Գառու գրուպ» ՍՊԸ-ն չի բավարարում ոչ միայն ֆինանսական չափանիշի որակավորման մասով՝

հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի մասով, այլ նաև ներկայացված նմանատիպ պայմանագրերի մասով, մասնավորապես՝ ՇՀԱՊՁԲ-7/21-8 և ԲՄԱՊՁԲ-7/30-2 պայմանագրերը, որոնց հանձնման-ընդունման արձանագրությունները ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ մատակարարումները իրականացվել են պայմանագրով սահմանված գնման ժամանակացույցի խախտմամբ:

Օրինակ՝ ԲՄԱՊՁԲ-7/30-2 ծածկագրով պայմանագրերի հանձնման-ընդունման արձանագրություններ 69, 116, 134, 147,163 և այլն /կցվում են/, ինչպես նաև ՇՀԱՊՁԲ-7/21-8 ծածկագրով պայմանագրերի հանձնման-ընդունման արձանագրություններ 345, 185, 94 և այլն /կցվում են/:

Մինչդեռ հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի համաձայն սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում կոշկեղենի մատակարարման պայմանագրերը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝

պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընկերությունը հայտնել է, որ ուսումնասիրելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ պարզ է դառնում, որ «Գառու գրուպ» ՍՊԸ-ն չի բավարարում ֆինանսական չափանիշի որակավորման մասով՝ հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի մասով, քանի որ շտկման արդյունքում ներկայացրել է երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումար, որտեղ հաշվարկվել է նաև ԱԱՀ-ն, միևնույն ժամանակ «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերը իրականացվել են ոչ պատշաճ, այսինքն չեն բավարարում նաև հրավերով սահմանված պահանջներին, քանի որ պայմանագրերով նախատեսված մատակարարումները իրականացվել են պայմանագրով սահմանված գնման ժամանակացույցի խախտմամբ:

Ընկերությունը հայտնել է, որ մտահոգության տեղիք է տալիս նաև ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի գործողությունները և որոշումները, որոնք նախ շտկման արդյունքում «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից 03.07.2019թ. ներկայացված տեղեկանքը հիմք ընդունելով որոշում են կայացրել բավարար գնահատել «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և վերջինին ճանաչել հաղթող մասնակից, ավելին գնահատող հանձնաժողովը կարծես թե չի ուսումնասիրել նաև այն հանգամանքները, որ ներկայացված տեղեկանքում հաշվարկված է նաև ԱԱՀ, իսկ 2 փուլով ներկայացված փաստաթղթերում, մասնավորապես նմանատիպ պայմանագրերում չեն նկատել նաև պայմանագրերով նախատեսված մատակարարումները իրականացվել են պայմանագրով սահմանված գնման ժամանակացույցի խախտմամբ:

Ելնելով վերը նշված փաստերից և փաստական հանգամանքներից՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 17.07.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/53 ծածկագրով բողոքը բավարարել:

Ի լրումն բողոքի Ընկերությունը 30.07.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք

աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Իսկ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ:

Կարգի վերը նշված կետերի վերլուծությունից հստակ է, որ 47-րդ կետի ուժով սահմանվում է արձանագրված անհամապատասխանություններ շտկելու կարգը, իսկ 44-րդ կետի ուժով սահմանվում է, որ հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Մինչդեռ «Գառու գրուպ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին ներկայացրել է կոմիտեի կողմից տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն՝ սակայն գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը չի մերժվել, ինչը հստակ սահմանված է Կարգի 44-րդ կետով՝ հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Իսկ ինչ վերաբերվում է դիրքորոշմամբ ներկայացված այն հանգամանքին, թե՝ ներկայացված բողոքում մասնակի է հղում կատարվում վերոհիշյալ կարգի 44-րդ կետին, ապա հայտնում ենք, որ ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/53 ծածկագրով բողոքում հղում է կատարվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44-րդ կետին ամբողջությամբ /տես թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/53 ծածկագրով բողոքի 4-5 էջ/:

Ի լրումն բողոքի Ընկերությունը 07.08.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

24.06.2019թ. ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությամբ «Գառու գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում ներկայացված գնային առաջարկից /349,181,331 ՀՀ դրամ/:

Այնուհետև գնահատող հանձնաժողովը՝ 03.07.2019թ. ծանուցել է մասնակցին՝ սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատաս-խանությունները՝ ֆինանսական չափանիշի որակավորման մասով՝ հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի մասով:

«Գառու գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ի կողմից նույն 03.07.2019թ. թվագրված տեղեկանք է ներկայացրել գնահատող հանձնաժողովին, որտեղ նշված է՝ տրվում է «Գառու գրուպ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00443711/ կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկների և շրջանառության հարկի հաշվարկների

նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է՝ 417,567,732 ՀՀ դրամ:

Արդյունքում գնահատող հանձնաժողովը վերը նշված տեղեկանքը հիմք ընդունելով՝ որոշում է կայացրել բավարար գնահատել «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և վերջինս ճանաչվել է հաղթող մասնակից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Մինչդեռ «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից 03.07.2019թ. ներկայացված տեղեկանքում անհասկանալի կերպով հաշվարկվել է նաև ԱԱՀ և, որն ամենակարևորն է, գնահատող հանձնաժողովի կողմից վերը նշված փաստը անտեսվել է: Ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ-ն) անուղղակի հարկ է, որը գանձվում է ապրանքների ներմուծման դեպքում, մատակարարի կողմից մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների դիմաց և վերականգնվում է գնորդի կողմից առևտրային շղթայի յուրաքանչյուր էտապում մինչև վերջնական սպառողը:

Կարգի 44-րդ կետից ուղակի բխում է, որ հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Մինչդեռ «Գառու գրուպ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին ներկայացրել է կոմիտեի կողմից տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն՝ սակայն գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը չի մերժվել, ինչը հստակ սահմանված է Կարգի 44-րդ կետով՝ հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին միջնորդություն էր ներկայացվել, որով խնդրել էինք՝ կատարել հարցում ՀՀ ՊԵԿ, որպեսզի վերջապես պարզեն,ք թե «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը որքան է կազմում: Ի պատասխան վերը նշված հարցման՝ ՀՀ ՊԵԿ-ը տրամադրել է տեղեկատվություն, ըստ որի «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չի կազմում 417,567,732 ՀՀ դրամ, այլ կազմում է 401,131,331 ՀՀ դրամ:

ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունից պարզ է դառնում, որ «Գառու գրուպ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին է ներկայացրել իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն՝ ներկայացնելով երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումար, որը կազմել է 417,567,732 ՀՀ դրամ և որի մեջ հաշվարկվել է նաև ԱԱՀ, որը համախառն եկամտի մաս չի կազմում:

Ուսումնասիրելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ մրցույթի գնահատող հանձնաժողովը ուներ «Գառու գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մի քանի հիմքեր, մասնավորապես՝ գնահատող հանձնաժողովը պարտավոր էր մերժեր «Գառու գրուպ» ՍՊԸ-ի հայտը այն հիմքով, որ շտկման արդյունքում ներկայացված 03.07.2019թ. տեղեկանքում հաշվարկվել էր ԱԱՀ, և եթե նույնիսկ կասկածելի պայմաններում գնահատող հանձնաժողովը չի նկատել վերը նշված փաստական հանգամանքը, ապա «Գառու գրուպ» ՍՊԸ-ի հայտը պետք էր մերժեր

հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը՝ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Միևնույն ժամանակ «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի տնօրենի պահանջով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի կոմերցիոն գծով տնօրեն Հ. Մանուչարյանի հաղորդման հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1 մասով, 315-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով՝ հարուցվել է թիվ 90151819 քրեական գործ՝ ՀՀ պաշտպանության նախարարության և զինված ուժերի գլխավոր շտաբի համապատասխան պաշտոնատար անձանց կողմից ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք դրսևորելու, ինչպես նաև պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ պարունակող գրառումներ կատարելու դեպքերի առթիվ /հիմք՝ ավելացված արժեքի հարկը համախառն եկամտի մաս չի կազմում/: Անհրաժեշտության դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշումը՝ «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ն պատրաստակամ է ներկայացնել /ցուցադրել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Ամփոփելով վերը նշված փաստերը, Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 17.07.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/53 ծածկագրով բողոքը բավարարել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.07.2019թ. ժամը 10:45-ին և 01.08.2019թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Գառու Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գառու Գրուպ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված միջնորդությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ԳԲՔԱ-ՆԳ-2019/53 բողոքով ներգրավվել է որպես կողմ:

«Գառու Գրուպ» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.08.2019թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է, որ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը «Գառու Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել է, որի արդյունքում «Գառու գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ավել է սույն ընթացակարգի շրջանակում ներկայացված գնային առաջարկից, որը և հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է բավարար:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ուսումնասիրելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 19.07.2019թ. թիվ Մ-4359-2019 գրությամբ ներկայացված «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի 17.07.2019թ-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր

տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ:

Նույն կարգի 44-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե) կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ վերոհիշյալ ընթացակարգի շրջանակներում կոմիտեի կողմից «Գառու գրուպ» ՍՊԸ-ին տրամադրված տեղեկանքում՝ վերջինիս երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չի եղել նրա կողմից ներկայացված գնային առաջարկից, ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով հիշյալ կարգի 47-րդ կետի պահանջը՝ վերջինիս հայտը գնահատել է բավարար:

Միաժամանակ հայտնում եմ, որ ներկայացված բողոքում մասնակի է հղում կատարվում վերոհիշյալ կարգի 44-րդ կետին, այն է. մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից, սակայն տվյալ դրույթը վերաբերվում է մասնակցության իրավունքին՝ հարկային պարտքին, այլ ոչ թե ՝ «ֆինանսական միջոցների» որակավորման

չափանիշներին, որոնք հստակ սահմանված են կարգի 63-րդ կետով ու կարգի 44-րդ կետով հստակ սահմանվում է, որ որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Ի լրումն վերոհիշյալ գրության Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

Ուսումնասիրելով «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի 17.07.2019թ. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ բողոքին ի լրումն ներկայացված փաստերը, հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ գնահատող հանձնաժողովները մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերը գնահատել են դրական, եթե ըստ ներկայացված փաստաթղթերի, պայմանագրերը կատարվել են ամբողջությամբ՝ հաշվի չառնելով մատակարարման ուշացումները, որը եղել է միասնական մոտեցում և կիրառվել է բոլոր նմանատիպ դեպքերում, ավելին տվյալ սկզբունքով գնահատվել են նաև «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված մասնագիտական փորձառությունը հավաստող փաստաթղթերը:

Հարցի վերաբերյալ առկա է նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.06.2018թ. թիվ 03127-1/11789-18 գրությամբ ներկայացված պարզաբանում, համաձայն որի՝ համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին (հարցումը և պարզաբանումը կցվում է):

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.07.2019թ. ժամը 10:45-ին և 01.08.2019թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/53 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2019/53 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ճտքավոր կոշիկների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Գառու Գրուպ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Գառու Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. «Գառու Գրուպ» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմում է 399 000 000 ՀՀ դրամ:

4. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 24.06.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Գառու Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների /2016թ., 2017թ. և 2018թ./ համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 349 181 331 ՀՀ դրամ:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.07.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 03.07.2019թ. ծանուցել է «Գառու Գրուպ» ՍՊԸ-ին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

6. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Գառու Գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից, այն հիմնավորմամբ, որ վերջինս սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի 17.07.2019թ. բողոքը և ի լրումն բողոքի ներկայացված գրությունները՝ կից փաստաթղթերով, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: ***<u>Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի</u>***

գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ***ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի***, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված ***փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ***: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Նույն կարգի 48-րդ կետի համաձայն՝ ***առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝***

1) ***շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.***

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ճտքավոր կոշիկների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գառու Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Գառու Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

«Գառու Գրուպ» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմում է 399 000 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 24.06.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Գառու Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների /2016թ., 2017թ. և 2018թ./ համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 349 181 331 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.07.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 03.07.2019թ. ծանուցել է «Գառու Գրուպ» ՍՊԸ-ին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Գառու Գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից, այն հիմնավորմամբ, որ վերջինս սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

Արձանագրում եմ, որ ԳԲՔԱ-ՆԳ-2019/53 բողոքի քննության շրջանակներում ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 24.07.2019թ. գրության՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 05.08.2019թ. գրությամբ հայտնել է, որ ՀՎՍՎ թիվ 2 բաժնում հաշվառված «Գառու Գրուպ» ՍՊԸ-ի 2019թ.-ին նախորդող երեք հաշվետու

տարիների համախառն եկամտի հանրագումարը /2016թ.-114 834 812, 2017թ.–113 951 400, 2018թ. – 172 345 119/ կազմում է ***401 131 331 ՀՀ դրամ***:

Այսպիսով, հաշվի առնելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գրությունը, արձանագրում եմ, որ, «Գառու գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը՝ 401 131 331 ՀՀ դրամը, պակաս չէ ներկայացված գնային առաջարկից՝ 399 000 000 ՀՀ դրամից, ուստի գտնում եմ, որ «Գառու գրուպ» ՍՊԸ-ն բավարարում է ֆինանսական չափանիշի որակավորման մասով, հետևաբար «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերվում է Ընկերության այն դիտարկմանը, որ Կարգի 44-րդ կետը իմպերատիվ սահմանում է, որ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից, ապա գտնում եմ, որ Ընկերության նման պնդումն անհիմն է և հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, քանի որ՝

Կարգի 44-րդ կետը սահմանում է, որ ***նույն կետով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:***

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ ***կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում*** հրավերի պահանջների նկատմամբ ***անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը*** նույն օրն էլեկտրոնային եղանակով ***ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ***:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է, որ ***առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:***

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված <u>մասնակցության իրավունքի</u> և <u>որակավորման չափանիշներին</u> իր համապատասխանության մասին:***

Այսպիսով գնումների օրենսդրությամբ հստակ տարանջատվում է մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին վերաբերող պահանջները:

Հետևաբար «Գառու Գրուպ» ՍՊԸ-ի հայտի նկատմամբ կիրառելի է Կարգի 47-րդ կետով նախատեսված շտկման հնարավորությունը, քանի որ Կարգի 44-րդ կետը հստակ սահմանում է, որ որակավորման չափանիշի գնահատման ժամանակ է հաշվի առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն պնդմանը, որ «Գառու Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ ՇՀԱՊՁԲ-7/21-8 և ԲՄԱՊՁԲ-7/30-2 պայմանագրերի հանձնման-ընդունման արձանագրությունները ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ մատակարարումները իրականացվել են պայմանագրով սահմանված գնման ժամանակացույցի խախտմամբ, ապա սույն մասով արձանագրում եմ, որ

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր, պայմանով, որ գնահատող հանձնաժողովը կարող է սույն կետի 2-րդ ենթակետի հիման վրա ներկայացված պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) կատարված լինելու իսկությունը ստուգել կոմիտեի միջոցով: Նախկինում կատարված պայմանագիրը (պայմանագրերը) գնահատվում է (գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ յոթանասուն տոկոսից: Ընդ որում, առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային

արտահայտությամբ չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ երեսունհինգ տոկոսից.

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) պատճենները, իսկ դրանց ***<u>պատշաճ կատարումը գնահատելու համար</u>՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.***

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար***, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:***

Այսպիսով Կարգի վերը նշված կետը հստակ սահմանում է, որ նախկինում կատարած պայմանագրի պատշաճ կատարումը գնահատվում է տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենի կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ Ընկերության բողոքը սույն մասով ևս անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 17.07.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**